

2570

66

24560

24561

24562

24563

24564

24565

24566

24567

84

P-24

Մարտ Ազգական

Դաստիարակության մասին
պատմություն Պատմական և
առաջ ազգական համար մասից : Կօյն ազգական
Բարեկամություն (Ազգական գործ և
կոչով)

Այս ամեն Պատմական և
ազգական պատմություն Են այս այս
պատմություն Պատմական պատմություն
արդի ազգական կոչ - Բարեկամություն
Ազգական պատմություն պատմական
համար մասից այս Պատմական գործ
կոչով պատմություն այս այս գործ

Իշխան
Տեղական

Հրատ. Զարդարված Պատմական գործ Բ. 4
Թատերական մատենակար թի. 3

ՎԱՐՉՈՒԱԾ ՍԵՆԵԱԿԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵԿ ԱՐԱՐ

Գրեց՝

ԼԵԽՈՆ ՇԻՇՄԱՆԵԱՆ

Ներկայացման արտօնութեան համար

Գիմել հեղինակին



Տպագր. Ս. Շիրինեան
Գամիք 1923

ԱՆԿԱՏԱՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

23571-43

Ա. Ն Զ Ե Ր Ը

ՕԳՍԵՆ	45 տարեկան
ԶԱՊԵԼ	0զսենի կինը
ՄԱՐԿՈՍ	Սպասաւորը
ՍԻՐԱՆՅԵՑ	Սպասուհին

Քահանայ մը եւ Հոգաբարձու (Պ. Յովհաննեսան)

Հ Ռ Զ Տ Հ Վ

(Վայելուշ սենեակ մը՝ խոր դուռ եւ արռոներ՝ տեսարանին աջ ու ձախ կողմբ բազմոցներ՝ որոնց վրայ կը հանգչին նկարէն բարձեր . մինչ վարագոյրը կը բացուի, 0զսեն բազկարոսի մը մեջ ընկղմած անշարժ կացութեան մեջ՝ իր հենհուքը խոր բլլալով՝ յանախ բերնին խօսուածքի մը ձեւը կուտայ . կարն դադարէ մը յետոյ սրափելով կ'աւելցնէ) :

ՏԵՍԻԼ Ա.

ՕԳՍԵՆ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐ

ՕԳՍԵՆ (Երբեւեկելով). — Ես պաղարիւն կինը չե՛մ սիրե՛ր, չե՛մ սիրե՞ր . . .

ՍՊԱՍ. (Մեկուսի). — Կ'երեւայ այս կինը գործին չեկառ . . .

ՕԳ. (Շարունակելով). — Չե՛մ սիրեր, չե՛մ սիրե՞ր, չե՛մ սիրեր . հասկցա՞ր :

ՍՊԱՍ. (Մեկուսի). — Արդեօք ինձի՞ կ'ըսէ . (Բարձր) այս', հասկցա՛յ, էֆէնսիս :

ՕԳ. (Բարկութեամբ). — Ինչպէ՞ս :

ՍՊ. (Շուարած): — Այս', ո՛չ . սակայն ես ըսի որ բան հասկցայ:

ՕԳ. — Ուրեմն ի՞նչո՞ւ չես հետաքրքրուիր հաս-
կընալ :

ՍՊ. (Մելմօրէն). — Կարծեմ քիչ մը հասկցայ՝ ա-
նոր համար :

ՕԳ. — Ի՞նչ հասկցար :

ՍՊ. — Հասկցայ որ գուշք չէ՛ք սիրեր :

ՕԳ. — Որո՞ւ :

ՍՊ. — Այդտեղը սոսկ չհասկցայ :

ՕԳ. — Եւ այդքանը զուն ուսկի՞ց լսեցիր. ան-
պատկա՛ռ, լի՛րբ, անդգա՛մ :

ՍՊ. — Մի՛ բարկանաք, էֆէնտիս, ալ ասկէ յե-
տոյ ձեր ըսելիքներուն խուլ կը ձեւանամ. ես ալ չու-
զեցի լսել բա՛յց . . .

ՕԳ. — Հայտէ՛, ի՞նքի՞նքդ հաւաքէ և լու սուրճ
մը պատրաստէ ինձի :

ՍՊ. (Կանացի նման վիշերը հաւաքելով) :

ՕԳ. — Ծօ անպիտա՛ն, ի՞նչ կ'ընես :

ՍՊ. — Փէշերս կը ժողվեմ, էֆէնտիս :

ՕԳ. (Ոտքի ելլել ձեւացնելով). — Հիմա քեզի կը
հասկցնեմ (սպասաւորը կը մեկնի. ապա առանձին շա-
րունակելով). — Եթէ ներողութիւն խակ խնդրելու ըլ-
լայ, գարձեալ չի պիտի ներեմ զի՞նքը . . . ո՞հ, հան-
գուցեալ կի՞նս, ի՞նչպէս չարտասառեմ անոր հեզ ու
անձնուել բնաւարութեանը վրայ. իր քաղցրութիւնը՝
երջանկութիւն մը կը համափուէր շուրջը. և այս ա-
ներեսը ինձի հանդէպ ապերախտ դանուի՝ զիս մտիկ
ընել չուզէ, հետո չուզէ խօսիլ, աքհամարհէ ու ատէ
զիս, քովէս փախչի՛. ո՞չ, ո՞չ, այլեւս չի պիտի սի-
րեմ զի՞նքը, այնքան անուշ խօսեցայ, խրատեցի զի՞ն-
քը խօսքերով ու խստամերով և այս ապերախտը
գլուխը ծուէ ինձի, իր էրկա՞նը . . . մանաւանդ իր ա-
մուսինին . . . և երբէք չի պիտի պաշտեմ զի՞նքը . . .
ո՞հ, Աստուած իմ, այս ի՞նչ գժնդակ հարուածներ են

որ կը տեղան սրտիս. «վա՛յ, սէրս իմ կուլայ հոգւոյս
մէջ», պիտի մարիմ, հասէ՛ք, հասէ՛ք. (Յնչասպան
գետին կ իյնայ) :

ՍՊ. (Բեմին մեկ դունեն միւսը վագելով). — Տիկ.
Զապէլ, ձեր ամուսինը կ'երթայ կոր :

ԶԱՊ. (Ներսէն). — Մի՛ ձգեր զի՞նքը (բեմ զալով)
ա՞հ, ի՞նչ կը տեսնեմ, արթնցի՛ր, սիրելի՛ ամուսինս
• • • ջո՛ւր, ջո՛ւր (կը բերն). ո՞հ, կ'արթնեայ իմ հոգ-
ւոյս հատորը :

ՕԳ. (Սրափելով). — Սնգամ մը ևս կրկնէ այդ
բառերգ :

Զ. — Պաշտելի՛ ամուսինս :

ՕԳ. — Ուրեմն կը սիրե՞ս զիս :

Զ. — Ամբողջ սրտովս :

ՕԳ. — Ո՞հ, հանգուցեալ կնկանս նուիրականըզ-
գացումները, այժմ քու մէջդ ալ կ'զգամ. ներէ՛ ինձի,
սիրելի՛ս, որ յաճախ քու սիրտգ կը վշտացնէի :

Զ. — Ատոնք պատահական բաներ են. հիմա ինձի
մտիկ ըրէ, մէկդի թողունք այս անտեղի խօսքերը ու
քիչ մըն ալ մեր ամուսնութեան վրայ մտածենք, հե-
րիք է որ այսքան ատեն իբրև օտար ապերեցանք,
այժմէն սկսեալ պէտք է որ մեր միութիւնը հաւաստէ
պսակը.

ՕԳ. — Այդ պսակը ես վաղուց խորհած եմ (մը-
տածկոս) սակայն ինձի այնպէս կը թուի թէ՝ անակըն-
կալ գէպք մը վերի վար պիտի շրջէ մեր հոգւոյ բո-
լոր ցանկութիւնները :

Զ. — Ուսկի՞ց գիտես :

ՕԳ. — Պարզապէս ենթագրութեամբ :

Զ. — Ես ալ ստոյգ կ'ըսես կոր հասկցայ. քեզի
քանի՛ քանի՛ անգամներ ըսեր եմ և գարձեալ կ'ըսեմ
որ այդ ֆակերուգ, ենթագրութիւններուգ, աեսիլնե-
րուգ գերին մի ըլլար, անոնք երկբայական կարծիք-

ներ են, որոնց մէջ ճշմարտութիւն երբեք գոյութիւն չունի:

Օդ. — Սակայն չեմ յուսար որ այս մեր սերտ միութիւնը անվթար տեւողութիւն մը ունենայ: Խոչ չընդուներ պատ պիտի քաշեն մեր առջեւ, պիտի ուղեն խզել մեր միութիւնը, մանաւանդ պիտի գտնութիւն այնպիսի մարդիկ որ իրենց մարմաջներուն գոհացում տալու համար զանազան միջոցներու պիտի դիմեն . . .

ՍՊ. (Ընդմիջելով խօսքը). — Պր. Օգուէն:

Զ. (Անտարբեր). — Սիրելի՛ս, նախանձուները մեզ տեսնելով պիտի տոջորին, իրենց քօղերուն ծայրերէն շեղ նայուած քներ պիտի սեւեռեն մեր վրայ, ահա այս պիտի ըլլայ քու ենթադրած մէկ խոչընդուռ:

Օդ. — Եւ ինչպէս ալ ճիշտ գուշակեցիր:

ՍՊ. — Պր. Օգուէն:

Օդ. (Բարկութեամբ). — Քիչ մը համբերէ, անամո՛թ . . . մանաւանդ այն անողոք մարդիկը, որ կ'ուզեն մեր սէրը եղանել, այն ատեն ես իմ անզօր բազուկներովս պիտի խողողեմ անոնց ու չի պիտի թողում որ անոնց կեանքը երկարանայ, այլ պիտի դիմեն այն պիտի միջոցներու . . .

ՍՊ. — Պր. Օգուէն:

Օդ. (Կրկնելով). — Այլ պիտի դիմեն այնպիսի միջոցներու . . . որպէսզի անոնք ալ մեր սիրոյ մութեան մէջ ոչնչանան:

ՍՊ. — Պր. Օգուէն:

Օդ. — Լոէ՛, անզգամ, մարդու մը խօսած ատեն չեն ընդմիջեր:

ՍՊ. — Էֆէ՛նտիս, գուրսը մէկը եկեր ձեզ կ'ուզէ:

Օդ. — Գնա ըսէ որ թող քիչ մը համբերէ:

Զ. — Վերջապէս, սիրելի՛ս, լաւ գիտեմ որ ձեր այդ արտայատութիւնները անկեղծ են, մանաւանդ որ ձեր խօսուածքին մէջ կը խառնէք, ձեր եռանդք,

աշխուժութիւն մը, որ իմ սիրոս ալ կը կաշկանդէ ձերինին, և սակայն, պր. Օգուէն, բան մը կայ որ զիս մէծ անհանգստութիւն կը պատճառէ:

Օդ. — Եւ ի՞նչ է ձեր անհանգստութեան պատճառը:

Զ. — Մտիկ ըրէք որ ըսեմ. ինչպէս որ զիտէք, 12 տարի կ'ըլլայ որ մէնք առանց ամուսնութեան կ'ապրինք, քիչ թէ շատ մեզի ծանօթ այս գաղութը, մանաւանդ այդ բաց բերան մարդոց ի'նչպէս խօսք պիտի հասկցնենք:

Օդ. — Դուք այդ մասին անհոգ եղէք, ես ձեզի շատ մը տեղեր ներկայացուցած եմ իբր իմ քոյլոս և . . .

Զ. — Օ՛, այդ խաղառ խանգարեց մեր ամուսնութիւնը:

Օդ. — Ինչի՞ս խանգարեց, աւելի շոկեց. լսեցէք որ ըսեմ, մեր ամուսնութիւնը պիտի կատարուի այս տան մէջ մեր քահանային ձեռքով, ես երէկ Տէր Ռուբէնին հետ անձամբ տեսնուեցալ, նա այս գործը առանց առաջնորդարանին խմացնելու, ինք պիտի լուծէ, այն պայմանաւ որ պսակին համար պէտք եղած ծախսերը իրեն արուեի, (կը մտածէ) բա՛ց . . .

Զ. — Ինչո՞ւ կը մտածես:

Օդ. — Կը մտածեմ՝ արգեօք սպասաւորէն ու սպասուհիէն ալ ծածուկ ընենք թէ ոչ:

Զ. — Օ՛, այն ատեն անկասկած պսակը ետ կը մնայ, անոնք մեր կնքահայրն ու կնքամայրը պիտի ըլլան. լու չէ՞ մտածումս:

Օդ. — Սքանչելի մտածում:

ՍՊ. (Ներս գալով). — Պր. Օգուէն:

Օդ. — Զիսուի՞ս:

ՍՊ. — Մէկը եկեր ձեզ տեսնել կ'ուզէ:

Օդ. — Բոէ որ կուզայ (սպասաւորը կը մեկնի): Ուրեմն սիրելիս, ես այս վայրկեանիս, կ'երթամ

կը գտնեմ Տէր Հայրը ու պսակին համար պէտք եղած
կարգագրութիւնները չուտով կը տեսնեմ (կը մելինի):

(ԶԱՊԵԼ ԱՌԱՆՁԻՆ)

(Քանի մը անզամ երբալ գալէ յետոյ) Աղնիւ, խո-
հեմ, համեստ, ուսումնական, քաղաքավար, բարե-
կիրթ, մահաւանդ փարթամ մարդու մը ի՞նչպէս ձեռքս
չերկարեմ, ինչո՞ւ չի սիրեմ զինքը, քանի որ խնդ-
րանքներս կ'ընէ առանց այլեւայլ պատճառներու, թէ և
նա տգեղ է՝ բայց և այնպէս լաւ բնաւորութեան տէր.
յաճախ իր բաղձանքներուն գոհացում տալու համար
հեռուէն կը ժապիմ, մարմնոյս տեսքը կը փոխեմ,
տչքիս մէկը բաց ու միւսը զոց կը պահեմ, և նա այս
ձեւակերպութիւններուս չի կրնալով հանդուրժել, շա-
րունակ հաւածանքի կը մատնէ զիս, բայց ևս դարձեալ
միջոցով մը կը ճողովրիմ իր ձեռքերէն... ինչ որ է,
մինչև որ Տէր Հայրը դայ, պատրաստ ըլլամ պսակի
արարողութեան (կը մելինի):

Տեսիլ Բ.

ՍՊԱՍՈՒԾԻՆ ԱՌԱՆՁԻՆ

Սիր. (Ներս գալով՝ ամեն բան վերջացած համա-
րելով). — Ս. յեւս չեմ կրնար համբերել, սիրոս բա-
ցէ ի բաց պիտի բանամ իր տոշե, ինչ կ'ուզէ թող
ըլլայ, բաւական է որ ես զինքը սիրած եմ, այսքան
ժամանակ լուռ ու մաւնջ կենալուս պատճառը, այժմ
կ'ստիպէ զիս որ ամէն ինչ խօսիմ. տիկինս ալ մա-
սամբ տեղեակ է խնդրէն և նա խոսացաւ իր ձեռ-
քով կարգագրել այս գործը, (մելամաղձոս) սակայն այն
կէտը կը շփոթէ զիս, արդեօք Մարկոս զիս կը սիրէ.
եկողը կարծեմ ինքն է, գրանը ետին պիտի պահուը-
տիմ տեսնեմ ինչեր պիտի խօսի:

ՄԱՐԿ. (Յուսահիա) . — Ո՞հ, աշխատանքի ալ չեմ
կրնար տոկալ, (բազկատարած) ով աննման հրեշտակ...
գթայ այլեւս... մի՛ տոջորեր սիրո մը՝ որ զքեզ կը
պաշտէ անհուն տենչով մը... այդ քու չեղ նայուածք-
ներուգ մէջ կը կարգամ յաճախ մեր ապագայ երջան-
կութիւնը... Սիրանո՞յշ, ո՞րքան քաղցը է անոր եղա-
նակաւորումը, անոր բարդ կազմութիւնը. (Սրափե-
լով) բայց ի՞նչ կ'ընեմ ես, չըլլայ թէ մարդ տեսնէ
զիս անկասկած խենդ մը կարծելով պիտի բացագանչէ:
Սիր. (Մօտենալով). — Մարկո՞ս, կը հաճի՞ս նըս-
տիւ վայրկեան մը:

ՄԱՐ. (Յուսարած) . — Ինչո՞ւ համար:

Սիր. — Նստի՞ր կ'ըսեմ քեզի, վասն զի կարեւոր
խնդրի մը շուրջ կ'ուզեմ քեզի հետ լըօրէն խորհըր-
դակցիւ:

ՄԱՐ. — Պատրաստ եմ մտիկ ընելու:

Սիր. (Բայց բաց). — Կարո՞զ ես երջանկացնել զիս:

ՄԱՐ. (Նփորած) . — Ինչպէս միջոցներով:

Սիր. — Նախ՝ կը ցանկամ հասկնալ՝ արդեօք կը
սիրե՞ս զիս:

ՄԱՐ. — Խենդի մը պէս:

Սիր. — Ապացո՞յց:

ՄԱՐ. (Մեկուսի). — Ասիկա գործը բոլորովին
խանդարեց. (բարձր) ի՞նչ կ'ուզես որ ընեմ:

Սիր. — Պիտի ընես այն՝ ինչ որ դուն անկարելի
կը նկատես:

ՄԱՐ. — Հիմակուհիմա եկուր ընդունէ այս մտ-
անին:

Սիր. (Մատը անցնելով). — Ո՞հ, որքա՞ն երջա-
նիկ եմ հիմա:

ՄԱՐ. — Ա՞հ, բան մը կ'զգամ:

Սիր. — Այդ բանը ես ալ կ'զգամ. բայց հիմա
հետեւէ ինձի որպէս զի քիչ մըն ալ կարեւոր նիւթե-
րու շուրջ պարտէզը խօսակցինք:

ՄԱՐ. — Սիրով (դուրս կ'ելին):

Տեսիլ Պ.

ՔԱՀԱՆԱՆ ԱՊԱ ՕԳՍԵՆ

Տէր ՀԱՅՐ (Առանձին քեմ գալով կը բարեւի). — Ողջո՞յն ձեզ. մարդ մարդ մարդասանք չկայ եղեր, ես ալ ի զուր տեղը բարեւեցի. (կը նաև) լաւ կ'ըլլայ որ քիչիկ մը հանդիմ, վասնզի հեռաւոր տեղէ մը հետիւոն կուգամ. թէև գալու համար հանրակառք կար՝ բայց... ինչ որ է, ներկայիս այս տան մէջ ամուսնութեան վերաբերեալ կարդ մը կնճռոտ խնդիրներ կան զորս ստանձնեցի՝ առանց առաջնորդարան խմաց տալու, գժբաղդաբար, եթէ այս միջոցներուն չպիմեմ, բերանս բաց՝ ամբողջ օրը օդ պիտի կլլեմ. քահանայ մը իրեն համար սեփական ուղեցոյց մը ունի, որով կընայ անիկա յաճախ բարձր գումարներու տիրանալ. հիմա Պ. Օգսէնը գտնենք ու պսակին համար պէտք եղած կարդադրութիւնները սրբազրենք. կարծեմ եկողը սպասաւորն է, հարցնեմ իրեն:

ՄԱՐ. (Տէր Հօր ազը համբուրելով). — Օրհնեցէ՛ք, Տէր Հայր:

ՔԱՀ. — Աստուած օրհնէ, զաւա՛կս, ուր է Պ. Օգսէնը:

ՄԱՐ. — Կարծեմ (մտածելով) այս', կարծեմ տեղ գնաց, բայց Տէր Հայր, նախ կը տեսնեմ որ հանդըստութեան պէտք կ'զգաք. կը ծխէք երբէք:

ՔԱՀ. (Մերժելով). — Ո՞չ:

ՄԱՐ. — Սուրճ մը կը հրամմէ՞ք:

ՔԱՀ. — Ամենեւին:

ՄԱՐ. Լէմօնա՞տ:

ՔԱՀ. — Բնաւ երբէք:

ՄԱՐ. (Զարունակելով). — Ուխոքի, գօնեաք, շամփանիս...

ՔԱՀ. — Աւելորդ ձանձրով մի՛ ընէք:

ՄԱՐ. — Նուշ - անուշ:

ՔԱՀ. — Անհանգիստ մի՛ ըլլաք:

ՄԱՐ. — Ուրեհման:

ՔԱՀ. — Գոհ եմ ձեր առաջարկներէն:

ՄԱՐ. (Զայն առնելով). — Ոտքի ձայներ կուշդան ականջիս, կարծեմ տէրս է:

Տեսիլ Պ.

ՆՈՅՆ ԵՒ ՕԳՍԵՆ

ՕԳ. (Բարեւելով). — Նստեցէ՛ք, Տէր Հայր, անհանգիստ մի՛ ըլլաք:

ՔԱՀ. — Շնորհակալ եմ, զաւա՛կս:

ՕԳ. — Ամէն ինչ կարգին է, այնպէս չէ՞:

ՔԱՀ. — Այս', ամէն ինչ կարգագրուած է բացի մէկ բանէ:

ՕԳ. (Անմիջապես). — Եւ այդ բա՞նը:

ՔԱՀ. — Իրաւունք մը որ ինծի պիտի յատկացուի, իրբու այս գործին հիմնադրը:

ՕԳ. — Այս', այդ խօսքով իրաւունք ունիք. պսակէն յետոյ կը կարգագրենք:

ՔԱՀ. — Բնդհակառակը, այդ սեռի խնդիրներ պսակէն առաջ կը կարգադրեն, որպէս զի յետոյ իրարանցումի ու փաթըրթը տեղի չի տայ:

ՕԳ. — Անշուշ:

ՔԱՀ. — Դիտէք, Պր. Օգսէն, այս գործը զորստանձնեցի, գժուարին գործ մըն է:

ՍԳ. — Այդ ես գիտեմ:

ՔԱՀ. — Դժուար գործի մը արժէքը միշտ ի՞նչ կ'ըլլայ, գիտէ՞ք:

ՕԳ. — Ես ալ այդ կէտին շուրջ կը տատանիմ:

ՔԱՀ. — Տատանելու հարկ չկայ, արմատ բառ մըն է որ, պիտի ըսէի սո՞ւղ» կ'ըլլայ, ես պարզ ու

ցփուն խնդիրներու համար գրամ տալու իսկ ըլլաք, կը մերժեմ, բայց այս գործը, անվախ, աներկիւզ, առանց վարաննելու, տատամաննելու, չափելու և չափչութելու կատարելու համար այնպիսի գումար մը պիտի տաք, որ այս բոլոր ստալումները հեռացնէ ինձմէ:

09. — Կոխւ ընելու չենք եա, Տէր Պապա:

ՔԱՀ. — Կոխւ ընելու հարկ չկայ, քանի որ գործի մը իսկական արժէքը ակներե է:

09. — Շատ լաւ, ուրեմն քանիով կը գոհանաք:

ՔԱՀ. — Կը հաճի՞ք թուղթ և մատիտ երկարել:

09. — Ալրով (կ'երեւի զումարը բարձրացնել պիտի ջանալ) հրամեցէք:

ՔԱՀ. — Այս ըրի անոր համար որ գուք ալ գիտնաք ձեր հաշվաները. ուրեմն սկսինք. առաջին, այս գործը զոր ստանձնեցի, կ'արժէ 100 ոսկի:

09. (Բացազանչելով). — 0', օ', շատ բարձրացաք:

ՔԱՀ. — Համբերեցէք քիչ մը տակաւին, ասիկա գումարին մէկ մասն է. եկեղեցիէն մինչև հսո գալս ինքնաշարժով՝ կ'արժէ հինգ սոկի, հինգ ալ մեկնիլու՝ 10ը. հարսանիքը եթէ եկեղեցին կատարելու ըլլայիք որքա՞ն պիտի վճարէիք, ենթագրենք 20 սոկի. այն գումարը որ պատկէն յետոյ պիտի տաք ինձի իրեն յոդնութեան վարձք, կը գրեմ 5 սոկի, 2 ալ լուսարբին՝ կ'ընէ 7: Հարսանիքի շաքար առա՞ծ էք:

09. — Կարծեմ մտագիր չենք առնելու:

ՔԱՀ. — Երկու տուփ ալ հարսանիքի շաքար որ կ'արժէ մէկ սոկի, ընդհանուր գումարը կը հասնի 150 սոկի զեղչով միասին և կանիսի՞կ:

09. — Կանիսի՞կ. 150 սոկի հիմա ձեզի պիտի տաք:

ՔԱՀ. — Եւ ի՞նչ կայ այլափոխուելու:

09. — Ոչի՞նչ. բայց Տէր Հայր, ինձի այնպէս կը թուի որ այս գումարը քիչիկ մը շատ է:

ՔԱՀ. — Ես ալ քիչիկ մը շատ ըրի, որպէս զի ան ալ յոդնութեանն վարձքը ըլլայ:

09. — Կրնա՞ք բաւական մը իջեցնել:

ՔԱՀ. — Բաւական մը չեմ կրնար իջեցնել:

09. — Ուրեմն քովէն քիչ մը կարեցէք:

ՔԱՀ. — Եթէ քովէն կորելու ըլլամ, այն ատեն հարկ պիտի ըլլայ ամբողջ գրամը ծովը նետել, քանի որ գումարը իր բաւական արժէքը կը կորսնցնէ:

09. — Ուրեմն ի՞նչ պիտի ընենք հիմա, հաստատ որոշում մը:

ՔԱՀ. — Զքեզ սիրելուս համար հայտէ եկուը 150 սոկի տուր:

09. — Տարօրինակ երեւով. բայց Տէր Հայր, ոչ մէկ փսփոխութիւն չի մտցուցիք:

ՔԱՀ. — Ի՞նչպէս չի մացուցի, առակաւին լուսարբին և ժամկոչին իրաւունքները նկատի չեմ առած:

09. — Իրաւունք չունիք առնելու, քանի որ առնենք ներկայ չեն:

ՔԱՀ. — Բայց չի՞ որ ամբողջ գործը վրաս բեռցուցի. (յուսանա) օ'ֆ, ի՞նչ կ'ըսէք, Պր. Օգոէն, որ ձեզ պէս ազնուական, մանաւանդ փարթամ մարդ մը սակարիսութեան խնդիրներով զբաղի. ես զձեզ իմ առաջին կարծիքավու չափազանց առատաձեռն գիտէի, բայց և այնպէս հիմա ներկայ կարծիքս բոլորսին խսոր կը համեմատի միւս կարծիքիս հետ:

09. — Եւ գուք, Տէր Հայր, ձեր առաջին կարծիքին նայելով ըսիք այս գումարը, այնպէս չի՞:

ՔԱՀ. — Ընդհակառակը, առջի կարծիքիս հետ երբ համաձայնութիւն կնքէի, այն ատեն ներկայ գումարը կրկնապատկուած պիտի ըլլար, այսինքն հիմա ինձի 250 սոկի պիտի տայիք:

09. — 0' օ', ի՞նչ կ'ըսէք, Տէր պապա, զիս պիտի խնդիրները գուք:

ՔԱՀ. — Զաւակս, այս յետին առաջարկած գու-

մարս երբէք կապակցութիւն չունի մեր սակարկութեան հետ, վասն զի մեր խօսքը 150 սոկին շուրջ կը դառնայ. կը տեսնե՞ս ուրեմն, որքա՞ն խեղճ ու կը ալ մնաց միւս գրամին քով:

ՕԳ. (Փափելով). — Վերջապէս զիս համազեցիք:

ՔԱՀ. — Զաւա՛կս, ես եկեղեցւոյ սրաշտօնեայ մըն եմ, որ բովանդակ մարգկութիւնը սիրած է զիս. ես մարգը իրաւացի փաստերով կը համոզեմ և կարծեմ դուք ալ կ'զգաք այդ:

ՕԳ. — Զգալուս համար է որ այժմ պիտի տամ այսքան գրամը. (մտածելով) ի՞նչ պիտի ըսէի, Տէր հայր, կ'ուղէի որ կէսը հիմա բերեմ:

ՔԱՀ. — Ինչպէս որ կ'ուղէք, միայն ձեզմէ պիտի խնդրէի որ ամբողջ հաշիւը ներկայ ժամուս մաքրէիք:

ՕԳ. — Ուրեմն ներեցէք վայրկեան մը (կը մեկնի):

ՔԱՀ. — Ներեալ է. (ձեռները տիելով) բաւական ալ յոդնեցայ՝ մինչեւ որ ջիզերը զգայուն դարձուցի, և բաւական ալ ընդդիմացաւ չունչանորդի մարգը. ո՞հ, երանի՞ թէ կնկանս չխմացնէի հարսանիքի մեկնիլու, քանի որ ծածուկ պիտի ըլլայ բոլորէն, և այսօր ալ ժողովք ունինք, կրնայ ըլլալ որ զիս փընտռելու համար մեր տունը երթան և կինո հարցափորձեն և նա ստիպուած բացէ ի բաց պիտի ըսէ իմ ուր ըլլալու, քանի որ իրեն անձամբ չեմ պատուիրած. վայ, հապը կլեցինք:

ՕԳ. (Բեմ գալով). — Կլածը ի՞նչ է արդեօք, (բարձր) ահաւասիկ, 10, 20, 30, 40, 50, 50 ալ 100, 50 ալ՝ 150:

ՔԱՀ. (Մեկուսի). — Հաւատա՞մ արդեօք, (բարձր) այս շատ ճշմարիտ է, ուրեմն շուտով անցնինք պսակի արարողութեան:

ՕԳ. — Այս', ամէն ի՞նչ հիմա վերջանալու է և կարծեմ եկողը Տիկ. Զապէլն է:

Տեսիլ Զ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՏԻԿ. ԶԱՊԵԼ.

ԶԱՊ. (Ձեռքը կը համբուրէ):

ՔԱՀ. — Սոտուած օրհնէ, աղջիկս, բայց պր. 0գուէն:

ՕԳ. — Հրամմեցէք, Տէր Հայր:

ՔԱՀ. — Օրիորդը ձեր քոյրը չէ՞ր միթէ:

ՕԳ. — Այս', առկէ առաջ քոյրս էր, բայց այժմ կինս պիտի ըլլայ:

ՔԱՀ. — Կարելի՞ բան է:

ՕԳ. — Չէ՞ որ համաձայնեցանք:

ՔԱՀ. — Այս, բայց քոյր և եղբայր անկարող եմ պսակել, վասնդի կը վախնամ Տէրոջմէն:

ՕԳ. — Սխալ հասկցաք, Տէր Հայր, օրիորդը քոյրս ըստ ըսելով մի կարծէք որ ճշմարիտ քոյրն է. զինքը քոյրս պահեցի մինչեւ որ պսակուինք:

ՔԱՀ. — Սանկ ըսէ՞ք որ հասկնամ, ուրեմն ոտքի ելէք (ուրզը դիտելով) բայց ո՞ւր է կնքահալրը:

ՕԳ. — Այս', կեցէք որ կանչեմ, (դոնեն) Մարկոսս:

ՄԱՐԿ. (Բեմ գալով). — Հրամմեցէք, տէ՛ր իմ:

ՕԳ. — Վրայի վերաբկուդ շուտով հանէ որպէսպի մեզի կնքահայր պիտի ըլլաս:

ՄԱՐԿ. (Մեկուսի). — Բազգս ժպտիլ սկսաւ (բարձր) զլսուս վրայ (կերպայ կուգայ):

ՔԱՀ. — Ուրեմն կ'սկսիմ (առանձին կը շարունակէ. իիշ յետոյ դուռը կը զարնէ):

ՔԱՀ. (Բնդիասելով). — Ո՞չ կը կարծէք որ ըլլայ:

ՄԱՐԿ. — Կարծեմ կաթնավաճառն է:

ՕԳ. — Ուրեմն գնա բաց:

ՔԱՀ. (Շարունակելով):

Տեսիլ կ.

ՀՈԳԱՅԱՐՉՈՒՆ. (Ներս կը մՏնէ բարկութեամբ) . — Կեցի՛ր , Տէր Հա՛յր , մինչև ե՞րբ այսպէս պիտի շառաւնակես յստի ընթացքդ . զիտցած ըլլաս որ այս անգամ աղատում չունիս մեր ձեռքէն . պիտի վարենք քեզ իբրև եկեղեցւոյ անարժան պաշտօնեայ , արդարացման համար երբեք պատճառներ մի փնտուեր , վասունի արդարութիւնը այս անգամ իր ճշմարիտ վկայութիւնը երեւան բերաւ , (Միւսներուն) լոկ դուք , պր . Օգոէն , քանի որ մտածեր էիք ձեր ամուսնութիւնը ծածուկ կատարել , կրնայիք երկտողով մը մեզի խմացնել նախ քան այս գարշելի միջոցներու ձեռնարկել . այժմ ամէն ինչ վերջացած է , եթէ կը փափաքիք ձեր ամուսնութիւնը օրինաւոր կերպով կատարել , հետեւեցէք մեզի , որպէսզի այս անպատճենութեան համար պէտք եղած կարգագրութիւնները տեսնել յետոյ , իսկոյն կ'անցնինք ձեր պոսակին :

ԶԱՊ . — Այո՛ , այդպէս ընկելու է :

ՔԱՀ . — Բայց , պր . Յովհաննէսեան , ուսկի՞ց գիտէք որ . . .

ՅՈՎ . (Ընդմիջելով) . — Նոյն՝ ձեր կինը մանրամասնօրէն ինձ տեղեկացուց և մինչև յաջորդ փողոցը ինձ հետ ընկերացաւ տունը ցոյց տալու համար :

ՕԴ . — Ուրեմն Պր . Յովհաննէսեան , ժամ առաջ վերջանար այս գործը :

ՅՈՎ . — Այո՛ , հիմա հետեւեցէք մեզի : (Բոլորը մեկանց դուրս կ'ելլին) :

Տեսիլ Ը.

ՄԱՐԿՈՍ (Մեկուսի) . — Ա՛հ , ո՞ւր է Սիրանը , ժամ մըն է իր հետքը կը փնտռեմ և չեմ կրնար գըտնել , չեմ յուսար որ զիս լքած ըլլայ , վասն զի . . .

(Սիրանը նշմարելով) ի՞նչպէս , զուն այստեղ ես , երկու ժամ է շոշորթդ կը փնտռէի . վեր վար բոլոր սենեակները փնտռեցի , էն վերջը ստիպուեցայ խոհանուցին քովի գրան գլուխ և ահա գէմս ցցուեցար :

ՄԻՐ . — Ի՞նչ է պատճառը զիս փնտռելուդ :

ՄԱՐ . — Պատճառն այն է որ . . . Այո՛ , պատճառն այն է որ . . . (մեկուսի) ի՞նչ պիտի ըսէի , խելքս ալ չի գործեր . (բարձր) պատճառն այն է որ . . .

ՄԻՐ . — Ի՞նչ ըսել կ'ուզես :

ՄԱՐ . — Ա՛հ , եթէ կարենայիր գիտնալ . . .

ՄԻՐ . — Գիտես որ ես մինչև այսօր քու խօսքերէդ երբեք չեմ չեղած , ըստ ինչ որ պիտի ըսես և ես պատրաստ եմ գործադրելու :

ՄԱՐ . — Աճապարէ՛ ուրեմն , տիկինը և պարոնը եկեղեցի գացին իրենց պսակը կատարելու , չուտ շարժէ , քանի առիթը պատշաճ է :

ՄԻՐ . — Բայց մեր պսա՞կը :

ՄԱՐ . — Մեր պսակը մինչև հիմա վերջացած կ'ըլլար , եթէ հապճէպով շարժէիր : Օ՞ն , պատրաստ ես մեկնելու :

ՄԻՐ . — Այո՛ , կազմ ու պատրաստ :

ՄԱՐ . — Ուրեմն ձեռքդ տուր որ շուտով ներկայանանք (կը մեկնին) :

(Վարագոյր)

ՎԵՐՋ

